

ԱԶԳԱԿ ԵՆՈՐԵԱՅ ՀԱՅԱԹԵՐԹ, ազգային, քաղաքական և գրական: «Aztag», B. P. 587, Beyrouth (Gd. Liban).

ԱԶԳԱՐԱՐ ՕՐԱԹԵՐԹ: «Aztarar», Galata Rue Pérchembé, Pazar, 16, Stamboul (Turquie).

ԱԼԻՍ ՕՐԿԱՆ ԵՆՐ ՍԵՐԱՍՈՒՆՅ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ: «Aliss», P. O. Box 479, Madison Sq. Sta. New-York

ԱՆԱՀԻՏ ՀԱՆՂԷՍ ԺՈՒՅՄԱՆ ԵՆ ԱՐՈՒԵՍՈՒՆՆՈՐ շՐՋԱՆ: A. Tchobanian, Rue Sav. 9, Paris.

ԱՊԱԳԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՆՈՐԵԱՅ ԹԵՐԹ: «Abaka», 227 Boulevard Raspail, Paris 14°.

ԱՍՊԱՐԷՉ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ: «Asbarez», P. O. Box 865, Fresno-Calif. (U. S. A.).

ԱՐԱՔՍ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ: «Arax», Rue Cléopatra 7, Alexandrie (Egypte).

ԱՐԵՒ ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, գրական, քաղաքական: «Arev», B. P. 1060, Le Caire (Egypte).

ԱՐԵՒԵՆԻՔ ԱԶԳԱՅԻՆ ԱԳԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽ ՕՐԱԹԵՐԹ: «Arevk», Rue Pasteur 73, Salonique (Grèce).

ԱՐԺԵՆԹԻՆ ԱԳԱՏ ԵՆ ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ: «Argentin», Melian 4455, Buenos Aires (Argentine).

ԱՐԾԻԻ ՊԱՐԵՐԱԹԵՐԹ ՀԱՅ ԹՈՒՐԿԻՍՏԱԿԱՆ «ԱՐԺԻՆ» ՄԻՈՒԹԵԱՆ: «Ardziv», Rue Tzar Samouil 63 (Bulgarie).

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆՂԻՍԱՐԱՆ, բանասիրական, գիտական, բարոյական ամսագիր: «Pazmaveb», St. Lazare, Venise (Italie).

ԲՈՒՌԻՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՂԱԵԼՇՈՒԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՆ գրական շաբաթաթերթ: Mr. H. Karakache, Féhéran (Perse).

ԲՈՒԺԱՆՔ ԱՆՈՂՇԱԿԱԿԱՆ, գիտական և ընկերային ամսագիր: «Poujank», 126 Faubg. St. Denis, Paris (10°).

ԳԵՐՄԱՆԻԿ ԵՆԱԴՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՐԱԶԻ ՀԱՅՐԵՆԱԳԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ շՐՋԱՆԱԿԻՆ: «Kermanik», 331 Fourth Ave. Room 1006, New York (U. S. A.).

ԳԻՏԱՐԱՆ ԱՄՈՒՅԹԵՐԹ ԺԻՂԱԳՂԱՅԻՆ ՍՐ. ԳԻՐՔ ՈՒՍԱՆՈՂԱԳ ԺԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԿ. ԲԱԾԻՆ: The Tidaran, 117 Adams Street, Brooklyn, N. Y. (U. S. A.).

ԴՐՕՇԱԿ ԱՄՈՒՅԹԵՐԹ, ՕՐԳԱՆ ՀԱՅ յԵՂԱԲՈՒՍԱԿԱՆ ՂԱՅՆԱԿԿՈՒԹԵԱՆ: «Droschak», 5 Rue des Gobelins, Paris (13°).

ԵՐԵՒԱՆ ԵՐԿՈՐԵԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՆ գրական: «Erivan», 13 Rue Pascal, Paris (5°).

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿՀԱՐԱԹԱԹԵՐԹ, ՕՐԿԱՆ Ս. Դ. Հ. Կ. ԱՄԵՐԻԿԱՅԻ

շՐՋԱՆԻ: «Eritassard Hayastan», P. O. Box 9, Mad. Sq. Sta., New-York (U. S. A.).

ԵՐԿՈՒՆՔ ԱՄՈՒՅԹԵՐԹ, ՕՐԿԱՆ Չ. Ե. Ո. ՄԻՈՒԹԵԱՆ: Mr. Kurdjian, 247 Bd. Voltaire, Paris.

ԵՓՐԱՏ ԵՆՈՐԵԱՅ, ազգային, քաղաքական, գրական և գիտական: «Yeprad», B. P. 382 Alep (Syrie).

ԶՈՒԱՐԹՆՈՅ ՊԱՐԵՐԱԹԵՐԹ գրականու-նութեան և արուեստի: Mr. H. Paloutian, Boîte Postale Nr. 50, Paris (10°).

ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԱՅԱԹԵՐԹ: «Jama-nak», 31 Kürekciler caddesi 31, Stamboul (Turquie).

ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ՉԱՅՆ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԱՆԿԱԽ ՕՐԿԱՆ: 1 Rue Aristide, Athènes (Grèce).

ԼԻԲԱՆԱՆ ԱԶԳԱՅԻՆ, գրական, քաղաքական և արուեստի հայաթերթ: «Libanan», 9 Rue d'Italie, Beyrouth, (Syrie).

ԽՈՒՆ AIGUILLON Journal Franco-Arméniens bimensuel, Organ des anciens volontaires arm. de l'armée française. 155 Abonni Colbert, Marseille.

ԽՈՐԶՐԳՈՒՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՕՐԱԹԵՐԹ: ՕՐԳԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆԿՈՒՍԱԿԿՈՒԹԵԱՆ: «Choroordain Hayastan», Erivan-Arménie (U. R. S. S.).

ԿԱՅՑԱԿ ՄԱՐՄԻՆԱԿՐԹԱԿԱՆ ԱՄՈՒՅԹԵՐԹ. ՕՐԿԱՆ ԿԱՅԾԱԿ ՀԱՅ ՄԱՐՄ. ՄԻՈՒԹԵԱՆ: «Gaizag», Rue Bein-El-Sourein, Le Caire (Egypte).

ԿԱՎՈՐՇ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ: «Gavroche», 208bis Rue Lafayette, Paris (10°).

ԿՈՄՄՈՒՆԻՍՏ ՕՐԱԹԵՐԹ: «Kommunist», Rue Miasnikian 4, Baku (U. R. S. S.).

ԿՈՒՆԻԿ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ, ազգային, քաղաքական, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ: «Groong», 5617 Walnut Street, Philadelphia, Pa. (U. S. A.).

ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶԳԱՅԻՆ, քաղաքական և գրական շաբաթաթերթ: «Hayastan», Str. Calusei 7, Bucarest 4 (Roumanie).

ՀԱՄԱՍՊՐԱՄ ԵՐԿՈՒՍԱՆ ՀԱՅԿԱՂՆԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ: «Hamasbram», 58 Rod-el-Farag, Le Caire (Egypte).

ՀԱՅ ԱՐԻ ՕՐԿԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՅ ՍԿԱՆՈՒՆԵՐՈՒ: «Haï Ari», 3 Rue Gustave Tricard, Bagneux (Seine) (France).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ: «Gotchnag», 331 Fourth Ave., New York (U. S. A.).

ՀԱՅ ԽՕՍՆԱԿ ԱՄՈՒՅԹԻՐ ԿՐՈՏԱ-ՐԱՐՈՅԱԿԱՆ ԵՆ գրական: «Hay Khosnak», Panscaldi B. P. 16, Stamboul (Turquie).

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 7, 8

ՅՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ

ԽԳ. ՏԱՐԻ 1930

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԵՑԻ ԵՒ ՂԵՒՈՆԳ ԵՐԷՑ ԵՐԿՈՒ ՊԵՏՄԵԳԻՐՆԵՐՈՒ ՆՈՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

(Շարունակութիւն տ. վերջ:)

Ո՞վ է ՍԱՀԱԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՄԵԿԵՆԱՍ ՄՈՎՍԻՍԻ: — ՄՈՎՍԵՍ ԵՒ ՂԵՒՈՆԳ ԱՆՈՒՆԵՐՈՒ ՇՈՒՐՁԸ:

9. Սահակ Բագրատունի, Մեկեման Մ. Խորենացու: — Ղեկնող երէց իւր Պատմութիւնը կը գրէր 790ին «Ի հրամանէ տեառն Շապուհ Բագրատունու»: Առիթ ունեցանք ուրիշ տեղ 20 ծանօթանալու Շապուհի նաւորութեան, որ Սմբատ սպարապետի († 775) որդին էր, եղբայրն Աշոտ իշխանի († 826) և ինկած էր Սեւաղայի դէմ մղուած կռուին մէջ (823/24):

ա. Նաև Մովսէս Խորենացի իւր «Հայոց պատմութիւնն յերիս հատուածս» գրած է «Ի խնդրոյ Սահակայ Բագրատունու», ինչպէս զբողոքուած է իր երկասիրութեան ճակատը. և կը կրկնուի Ա. գրոց ընծայակա-նին սկիզբը. «Մովսէս Խորենացի բանիցս՝ մերոյ ի սկզբան այսր (տալ. յայտմ) բանիցս Սահակայ Բագրատունու խնդար»: այսպէս նաև առաջին գլխուն խոստարանութեան մէջ. «Պատասխանի թղթոյն Սահակայ և խոստունն կատարել զհայցուածս նորա»: Այս տողերէն կ'իմանանք միանգամայն, թէ Մովսէս գրաւոր գիմում մ'ընդունած է Սահակ Բագրատունիէն, որուն և պատասխանած է: Սահակ և Մովսէս մինչև այն ժամանակ ղեռ առիթ չէին ունեցած անձնական զանազան իրողութիւնս, երբ կը գրէ. «Ճատովանի իրողութիւնս, երբ կը գրէ. «Ճատովանի ի ձեռն գեղեցիկ խնդրոյս՝ յառաջ քան զմարմնոյդ զհոգւոյդ ընկալեալ զծանօթու-թիւն» (Ա. 1):

Սահակ ծագումով կը պատկանի «ազգի նախնականի», որ է «Եւ քաջ և արգասա-ւոր ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խո-հականութիւնս, այլ և ի մեծամեծս և ի բազում գործս արժանախոս» (Ա. 1): Անոնք Բագրատունիներն են: Մովսէս նաև Մանուկ հասցէին կը շուրջէր զբողոքները. «ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանա-չիս վեհազոյն, և բարձրագունից արժանա-ւոր գովութեանց» (Ա. 1). նա «ուշիմ ըն-թերցասէր» է (Ա. 5), «ուսումնասէր» (Ա. 16), «ընթերցող» (Ա. 31) եւ այլն:

Ո՞վ է այդ «ուսումնասէր» Սահակ գունից արժանաւոր գովութեանց Սահակ Բագրատունին: Շատերը, սկսեալ Թովմաս Արծրունիէն (էջ 75), ուղեցին անոր մէջ Սահակ ասպետ Բագրատունին ճանչնալ, որ 481ին Պարսիկներու դէմ պայտամարտ էր նախարարներու կողմէն կարգուած էր «մարդպան Հայոց», վահան Մամիկոնեանի տանուտէրութեան օրով և զբողոքուած է Ղազար փարպեցիէն (էջ 129) իբրև «լաւ պար» և «քանչիւր ասպետ» և թէ յետոյ ին-կած նահատակական մահուամբ ծարմանայ-նու կռուին մէջ: Բայց, ինչպէս վերագոյն բացատրեցինք, Մովսէս չէր կարող այս Աս-պետն աչքի առաջ ունեցած ըլլալ, քանի որ ամէն կասկածէ վեր է, որ «Հայոց պատմու-թեան» հեղինակը ժամանակով շատ հեռու է Սահակէն: Ինչպէս իր անձը, նոյնպէս իր Ե. դարէն²¹: Ինչպէս և վերու վեր-ջերն և կամ ի սկիզբն ինքերորդին: Մեր քննութիւնները հասուցած էին զմեզ 790—810 շրջանին:

Որոնք այժմ այս տարիներուն համա-նուն Բագրատունի մը:

Սահակ Բագրատունու անձնաւորու-թիւնը վեր հանելու համար հարկ է նախ

²⁰ Հանդէս Ամսօրեայ, 1929, էջ 339:

